



Կենսագրություն

Ծնվել է Երևանում:

2004 թ. ավարտել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը (դաս.՝ Թ. Համբարձումյան):

2010 թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետ. կոնսերվատորիան (պրոֆ.՝ Գ. Գեղամյան):

2004-2008 թթ. երգել է Սուրբ Գեղարդավանքի երգեցիկ խմբում՝ ներկայացնելով հայ հոգևոր և ժողովրդական երաժշտությունը:

2008 թ. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Գ. Գասպարյանի անվան մեներգիչների հանրապետական մրցույթում արժանացել է առաջին կարգի մրցանակի և ոսկե մեդալի:

2009 թ. պարզևատրվել է ՀՀ նախագահի երիտասարդական մրցանակով և ոսկե մեդալով:

2010 թ. Մոսկվայում տեղի ունեցած 16-րդ «Գեղեցիկ ձայն» միջազգային մրցույթում ստացել է առաջին կարգի մրցանակ:

2011 թ. Հռոմում կայացած (Musica Sacra) միջազգային մրցույթում արժանացել է առաջին կարգի մրցանակի՝ ներկայացնելով նաև հայ հոգևոր երաժշտությունը:

2012 թ. Հասմիկ Թորոսյանը հրավիրվել է ԱՄՆ (Մինեսոտա)՝ Ռ. Լեոնկավալոյի «Պայացներ» օպերայում Նեդդայի դերերգի կատարմամբ հանդես գալու «Հարավային լույսեր» երաժշտական փառատոնին:

2013 թ. տեղի է ունեցել Հասմիկ Թորոսյանի բրիտանական առաջին բեմերը Գլայնբորն օպերային թատրոնում՝ Նորինայի դերերգով «Դոն Պասկուալե» և Ադինայի դերերգով Գ. Դոնիցետիի «Սիրո ընկերակ» օպերաներում:

2014 թ. Հասմիկ Թորոսյանն ուսանել է Ջ. Ռոսսինիի ակադեմիայում՝ մասնաբաժնի Ա. Ջեդդայի ղեկավարությամբ, և հենց Ռոսսինիի ծննդավայր Պեզարո քաղաքում էլ կայացել է նրա առաջին իտալական բեմերը: Ջ. Ռոսսինիի անվան օպերային թատրոնում երգչուհին կատարել է Կորինայի դերերգը «Ճանապարհորդություն դեպի Ռեյնս» օպերայում: Չանցած մեկ ամիս՝ Հասմիկ Թորոսյանն ստացել է հրավերը Մասնաբաժնի Ա. Ջեդդայի և «Ռոսսինի օպերա փառատոն»-ի կողմից՝ հանդես գալու Լիզետտայի դերերգով Ջ. Ռոսսինիի «Լա Գաճճետտա» օպերայում (Պեզարո, Իտալիա):

2015 թ. ի վեր նա միջազգային ակտիվ գործունեություն է ծավալում՝ ելույթներ ունենալով հեղինակավոր այնպիսի օպերային թատրոններում և համերգասրահներում, ինչպիսիք են . Բոլոնիայի քաղաքային թատրոնը (Teatro Comunale di Bologna), Վերոնայի ֆիլհարմոնիկ թատրոնը (Teatro Filarmonico di Verona), Նեապոլի Սան Կարոլո թատրոնը (Teatro di San Carlo), Սալերնոյի Վերդիի օպերային թատրոնը (Teatro Verdi di Salerno), Կալիարիի օպերային թատրոնը (Teatro Lirico di Cagliari), Թուրինի և Պարմայի Թագավորական թատրոնները (Teatro Regio di Torino, Teatro Regio di Parma), Պալերմոյի Մասսիմո թատրոնը (Teatro Massimo di Palermo), Ֆլորենցիայի «Երաժշտական նայիս» թատրոնը (Maggio musicale Fiorentino), Հռոմի օպերային թատրոնը, Անտվերպենի Ֆլամանդական, Համբուրգի օպերային թատրոնները, Փարիզի Շանզ Էլիզե թատրոնը (Théâtre des Champs Élysées), Բուենոս Այրեսի «Կոլոն» թատրոնը (Teatro Colón), Տոկիոյի նոր ազգային օպերային թատրոնը (NNTT), Բոլյուսելի (Flagey), Բոստոնի սիմֆոնիկ և Փարիզի ֆիլհարմոնիկ համերգասրահները:

2015 թ. (Festival Opera) փառատոնի շրջանակներում հանդես է եկել Ադինայի դերերգով՝ Գ. Դոնիցետտիի «Սիրո ընպելիք» օպերայում (Նոր Չելանդիա): Նույն թվականին ելույթ է ունեցել «Փարիզի ազգային նվագախմբի» հետ՝ Մարֆայի դերերգով Ն. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն» օպերայում (դիր.՝ Մ. Յուրովսկի):

Վարպետության դասընթացներ է անցել աշխարհահռչակ երգիչներ Թ. Բերգանցայի, Մ. Ֆրենիի, Գ. Բամբրիի և Խ. Դ. Ֆլորեսի մոտ:

Հասմիկ Թորոսյանի մարմնավորած դերերն են՝

Վ.Ա. Մոցարտ «Իդունենեո» – Իլիա

«Կախարդական սրինգ» – Գիշերային թագուհի

«Ֆիգարոյի ամուսնությունը» - Մուգաննա

Չ.Պուչչինի «Չանի Սկիկի» – Լաուրետտա,

«Բոհեմ» – Մուգետտա, Միմի

Չ. Ռոսսինի «Ճանապարհորդություն դեպի Ռեյնս»- Կորինա

«Լա Գաձձետտա»- Լիզետտա

«Թուրքն Իտալիայում» - Ֆիորիլլա

«Պարոն Բրուսկինո» - Սոֆիա

Գ. Դոնիցետտի «Լուչիա դի Լամերմոր» – Լուչիա

«Դոն Պասկուալե» – Նորինա

«Սիրո ընպելիք» – Ադինա

«Լոսնոտը» - Ամինա

Չ. Վերդի «Տրավիատա» – Վիոլետտա,

«Ռիգոլետտո» - Ջիլդա

Ռ. Լեոնկավալո «Պայացներ» – Նեդդա

Ժ. Բիզե «Մարգարիտ որոնողները» - Լեյլա

Ա. Տոմա « Ամառային գիշերվա երազ» - Եղիսաբեթ թագուհի

Ա. Տիգրանյան «Անուշ» – Անուշ

Հասմիկ Թորոսյանը հանդես է գալիս նաև օրատորեալ ժանրում.

Չ. Ռոսսինի «Փոքրիկ հանդիսավոր պատարագ»,

«Ստաբատ Մաթեր»

Վ. Ա. Մոցարտ «Մոտետ»,

«Ռեքվիեմ»

Լ. Բեթհովեն «Դոն մաժոր մեսսա» (Beethoven's Mass C-Dur)

Յ. Հայդն «Նելսոն» մեսսա ռե մինոր (Haydn's Nelson Mass)

2015 թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում հանդես է եկել Մոցարտի «Ռեքվիեմ»-ի կատարմամբ Ռոսաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի հետ՝ մանեստրո Վ. Մալիվակովի գլխավորությամբ (Երևան):

2013 թ. Հասմիկ Թորոսյանը Տ. Մանսուրյանի հեղինակած առաջին հայկական ռեքվիեմի հայաստանյան պրեմիերայի կատարողն է:

2017 թ. Հասմիկ Թորոսյանը հրավերք է ստացել Բոլոնիայի քաղաքային օպերային թատրոնից՝ կատարելու Ֆիորիլլայի դերերգը Չ. Ռոսսինիի «Թուրքն Իտալիայում» օպերայում, 2018 թ. Մուգետտայի դերերգը՝ Չ. Պուչչինիի «Բոհեմ» օպերայում, Մարիի դերերգը՝ Գ.Դոնիցետտիի «Գնդի դուստրը» օպերայում, 2022 թ. Սոֆիայի դերերգը՝ Չ. Ռոսսինիի «Պարոն Բրուսկինո» օպերայում:

2018 թ. կայանում է Հասմիկի գերմանական բեմերը Համբուրգի օպերային թատրոնում՝ Ֆիորիլլայի դերերգով, Չ. Ռոսսինիի «Թուրքն Իտալիայում» օպերայում:

2019 թ-ին Թուրինի Թագավորական թատրոնում տեղի ունեցած Վ. Բելլինիի «Լոսնոտը» օպերայում, Ամինայի դերերգի փայլուն կատարումից անմիջապես հետո, նա ստանում է հրավերք՝ հանդես գալու

թատրոնի նոր թատերաշրջանի բացմանը՝ մարմնավորելով Լեյլայի դերերգը Ժ . Բիզեի «Մարգարիտ որոնողները» օպերայում (2019/2020 թատերաշրջան):

2019 թ-ին Ն. Թորոսյանն առաջին անգամ հանդես է եկել Տոկիոյի նոր ազգային օպերային թատրոնում՝ Նորինայի դերերգով Գ. Դունիցետիի «Դոն Պասկուալե» օպերայում, այնուհետև 2023 թ-ին՝ Ջիլադայի դերերգով Ջ. Վերդիի «Ռիգոլետտո» օպերայում:

2021 թ. Հասմիկը հարստացրել է իր երկացանկը ևս մեկ գեղեցիկ դերերգով. Եդիսաբեթ թագուհի՝ Ա. Տոմայի «Ամառային գիշերվա երազ» օպերայում՝ Վեքսֆորդի օպերային փառատոնում (Wexford Opera Festival) Իռլանդիա:

2022 թ. Հասմիկն առաջնախաղով ելույթ է ունեցել Բուենոս Այրեսի պատմական Կոլոն թատրոնում՝ (Teatro Colón) ներկայացնելով Լեյլայի դերերգը Ժ . Բիզեի «Մարգարիտ որոնողները» օպերայում:

2011 թ-ից ի վեր Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենեջշոուի է: